

Ա. Հ. ԲՈԶՈՅԱՆ

ԽՈՇՈՐԱՓՈՒՇ ՍԶՆՈՒ ՍԱՂԱՐԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ԱՐԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ոեղուլիար ոճով կառուցվող կանաչ տնկարկների համար մեծ արժեք են ներկալացնում խուզված ծառաբռնսերը, որոնցով աղքատ են երեանի պուրակները: Մինչև այժմ երեանի պալմանների համար չեն առաջադրված ծառերի ու թփերի այնպիսի տեսակներ, որոնք խուզումից հետո աչքի ընկնեն իրենց պսակների բարձր գեղութափությամբ:

Երեանի կանաչապատման պրակտիկայում աչքի ընկնող ալդ բացը վերացնելու նպատակով երեանի թուսաբանական ալգու պալմաններում փորձել ենք ծառերի ու թփերի մի շարք տեսակներ, որոնցից մեկի՝ խոշորագույշ սղնու վերաբերյալ տվյալները շարադրվում են:

Խոշորագույշ սղնին (*Crataegus macracantha* Lodd.) խոշոր թոփի է, որն իր հալքենիքում (Հլուսիսալին Ամերիկա) հասնում է 4—5 մետր բարձրության, ունենում է 2,5—3 մ տրամագծով սաղարթ:

Թուսաբանական ալգու պալմաններում այն լավ է աճում հզոր, փուխր հողերում, չորագիմացկուն է և չի ցրտահարվում անգամ ցրտաշունչ ձմռանը: Սղնին ծաղկում է մալիսի սկզբին, պտուղները հասունանում են օգոստոսին: Արմատամացառներ չի տալիս, հասակավոր բույսերը լավ են դիմանում վերատնկմանը:

1954 թ. գարնանը խոշորագույշ սղնու 10 տարեկան թփերը 0,7—0,8 մ չափի հողագնդերով տեղադրվել են իրենց հիմնական տեղերում: Տնկումից անմիջապես հետո, նախքան բողբոջների բացվելը բույսերը ենթարկվել են նախնական ձևավորման՝ հեռացվել է տնկինների կմախքալին ճյուղերի երկարության 60—70 տոկոսը, ապա նրանց պսակին տրվել՝ անբուն գնդի, բնի վրա գնդի, անբուն բրդի և բնի վրա բրդի ձևերը: Խուզման լուրաքանչյուր վարիանտը կիրառվել է 10 բույսի վրա: Որպես ստուգիչ թողնվել են չխուզված օրինակներ: Յուրաքանչյուր խուզի հետ, որպես կամոն ջրմել և փիրեցվել են: Վեղեատացիալի ընթացքում ջրմել է 10—12 անգամ, փիրեցվել՝ 4 անգամ:

Ամեն տարի, վեգետացիալի ընթացքում և վերջում պարբերաբար չափվել է պսակի կոորդինատները և զրանցվել կմախքալին ճյուղերի քանակն ու ճյուղավորման կարգը: Կատարվել են ֆենոլոգիական դիտողություններ:

Փորձարկվող բույսերի նախնական ձևավորման տվյալները բերված են 1-ին աղյուսակում:

Ինչպես երեսում է աղյուսակից, նախնական ձևավորման հետեանքով բույսի բարձրությունը և պսակի մակերեսը կրճատվում է 2—3 անգամ: Բացի ալդ, ձևավորման առաջին տարում առաջանում են բազմաթիվ նոր ճյուղեր, որոնց արագ աճի շնորհիվ հետագալում հնարավորություն է ստեղծվում պըսակին ցանկացած գեղութափիվ ձևը տալու:

Աղյուսակ 1

Խոշորափուշ սցեն պատկի շափերը մինչև ձեռվորումը և Երանից հետո

Խոշորափուշ ձեռք	Մինչև ձեռվորումը			Ձեռվորումից հետո	
	Ապահովությունը մ-ով	Կամակակի շափերը մ-ով	Ճշուղովությունը կարողը	Մինչև բարձրությունը մ-ով	Կամակակի շափերը մ-ով
Գնդաձև անքուն	2,4	2,4×1,8	4—5	0	0,8×0,7
Գնդաձև բնավոր	2,8	2,8×1,7	4—5	0,5	0,8×0,7
Բրդաձև անքուն	2,6	2,6×1,6	4—5	0	1,5×0,8
Բրդաձև բնավոր	2,8	2,8×1,8	4—5	0,5	1,3×0,7

Աղյուսակ 2-ում ամփոփված է վեց տարվա փորձերի արդյունքները, ըստ տրում վերջին չափությունները և դիտողությունները կատարվել են 1960 թվի հոկտեմբերին:

Աղյուսակ 2

Խոշորափուշ սցեն պատկի ձեռվորման ցուցանիշները խոշորափուշ տարբեր ձևերի դեպքում, ըստ տարիների

Խոշորափուշ ձեռք	Ժարեթիվը		Հետաքաշի ան- դասությունը	Հետաքաշի ժամանակը	Շիռ-ջաղաքու- ման կարողությունը		Մահացող ձևավերի բանակը	Մահացող ձևավերի կարողը	Մազարթի չափը
	Տարի	Անուն			Տարի	Անուն			
Գնդաձև անքուն	1954	1	7—8	2—3	0	—	—	—	80×70
	1955	3	10—12	3—4	0	—	—	—	110×120
	1956	5	15—20	3—5	0	—	—	—	150×140
	1957	5	22—23	4—5	6—7	V	—	—	190×185
	1958	4	22—24	4—5	10—15	V	—	—	200×200
	1959	3	22—24	4—5	20—21	V	—	—	210×210
	1960	3	22—24	4—5	22—24	IV—V	—	—	220×220
Գնդաձև բնավոր	1954	1	7—8	2—3	0	—	—	—	80×70
	1955	2	10—12	3—4	0	—	—	—	110×100
	1956	4	13—18	4—5	0	—	—	—	140×130
	1957	4	20—22	4—5	0	—	—	—	160×145
	1958	3	20—22	4—5	8—10	V	—	—	170×160
	1959	2	20—22	4—5	13—14	V	—	—	180×170
	1960	2	20—22	4—5	19—20	IV—V	—	—	190×180
Բրդաձև անքուն	1954	1	8—9	3—4	0	—	—	—	150×80
	1955	2	10—11	3—4	0	—	—	—	170×100
	1956	4	13—16	4—5	0	—	—	—	210×130
	1957	4	18—19	4—5	0	—	—	—	250×160
	1958	3	18—19	4—5	0	—	—	—	270×170
	1959	2	18—19	4—5	4—8	V	—	—	280×180
	1960	2	18—19	4—5	10—11	V	—	—	290×180
Բրդաձև բնավոր	1954	1	7—8	3—4	0	—	—	—	130×170
	1955	2	8—10	3—4	0	—	—	—	160×95
	1956	3	13—14	4—5	0	—	—	—	200×120
	1957	3	15—16	4—5	0	—	—	—	220×130
	1958	2	15—16	4—5	0	—	—	—	230×140
	1959	2	15—16	4—5	6—7	V	—	—	240×155
	1960	2	15—16	4—5	8—9	V	—	—	250×160

Խնչպես երևում է աղլուսակի տվյալներից, խոշորագուշ սղնին խուզման բոլոր ձեւերի գեղքում բուռն աճ ունենում է ձեւագորման 3—4-րդ տարիներին, երբ բարձրանում է նաև ճլուղավորման կարգը:

Սկսու պատկը գնդաձեւ խուզելու գեղքում, կմախքալին ճյուղերի քանակը անհամեմատ ավելի շատ է լինում, քան բրդաձեւ, խուզման ժամանակ մանավանդ երբ հեռացվում է կմախքալին ճյուղերի երկարության 60—70 տոկոսը: Այս եղանակով հնարավոր է դառնում 3—4 տարվա ընթացքում ստեղծել խոշորագուշ սղնու լիարժեք, գնդաձեւ սաղարթ, կազմված 4-րդ, 5-րդ կարգի մանր և շատ խիտ ճլուղերից:

Դնդաձեւ պատկ կարելի է ստեղծել խնչպես բնի վրա, այնպես էլ առանց բնի: Վերջին գեղքում բուլսն ավելի արագ է աճում, արդ պատճառով էլ պատկի ձեւի պահպանման համար նրան պետք է ավելի հաճախ խուզել:

Բրդաձեւ խուզման գեղքում, համեմատած գնդաձեւի հետ, նախնական ձեւագորման ժամանակ փորձակիող բուլսերից ավելի քիչ մետամեր օրգաններ են հեռացվում՝ հիմնականում կմախքալին ճյուղերի ավելի բարակ մասերը (աղլուսակ 1): Նոր առաջացող կմախքալին ճյուղերը համեմատարար ավելի քիչ են լինում և դանդաղ են աճում քան գնդաձեւ խուզման ժամանակի Այդ պատճառով վեգետացիալի ընթացքում բուլսերը 1—2 անգամ պահած են խուզման և նրանց պատկները բրդաձեւ են դարձնում միայն խուզման 4-րդ տարվա վերջում: Բրդաձեւ պատկը նույնպես կարելի է ստեղծել բնով և առանց բնի:

Խոշորագուշ սղնու պատկը գնդաձեւ և բրդաձեւ խուզելու գեղքում, ինչպես բուլսերի վեգետացիան, այնպես էլ ճլուղերի փալտացումը, ձգձգվում է:

Դիտողաթիւնները ցույց են տվել, որ նախնական ձեւագորումից հետո առաջացած տերենների մակերեսը 1,5—2 անգամ մեծանում է, տերեններն աչքի են ըլինում իրենց խիստ մուգ կանաչ գույնով և աշնանը կոնտրոլի համեմատությամբ թափվում են 10—15 օր ուշացումով, որը հետագա տարիներում երբեք չի կրկնվում: Բացի դրանից, խուզման հետևանքով պակասում է արգախիսի բուլսերի ծաղիկների ու պտուղների քանակը և կոնտրոլի համեմատությամբ պտուղները ավելի խոշոր ու մասին են լինում:

Բոլոր գեղքերում էլ որպես կանոն խուզման համար ընտրված բուլսերը ենթարկվում են նախնական ձեւագորման, ըստ որում հաստ ճյուղերը հեռացվում են սուր սղոցով կամ ալգու մկրատով՝ թեք կամ ուղիղ: Ճյուղերի հատումից հիմնական բուլսի վրա գործնում են վերքեր, որոնց մեծությունը կախված է ճյուղերի հաստությունից և կտրման ձեւից: Թեք կտրված բարակ ճյուղերի վերքերը առողջանում են նույն կամ հաջորդ տարում, իսկ հաստ ճյուղերին՝ 4—5 տարի հետո: Բացի արդ թեք կտրումը տնի նաև այն առավելությունը, որ այս գեղքում վերքը բուժելու նպատակով գեպի կտրվածքը նյութերի ուժեղացող տեղաշարժի պատճառով ավելի շուտ են բացվում կտրվածքից վերև կամ նրան անմիջապես մոտ գտնվող աչքերը, որոնցից առաջացած շիպերը իրենց փարթամ աճի շնորհիվ ոչ միայն նպաստում են վերքի լավացմանը, այլ դառնում են կմախքալին ճյուղի անմիջական շարունակությունը:

Կմախքալին ճյուղի ուղիղ կտրման գեղքում առաջանում է 3—4 սմ երկարության բութակ և եթե այն չհեռացվի հետագայում կմախքալին ճյուղի չըրացման պատճառով կհանդիսանա: Կմախքալին ճյուղի լուրաքանչչուր կտըր-

վածքի ներքեցից առաջանում է 4—5 նոր շիվեր, որոնցից գագաթնալինը գերիշխում է:

Նախնական ձեւվորումից հետո խուզում տարում խուզում չի կատարվում: Հաջորդ տարում կատարվում է երկու խուզում, առաջինը՝ գարնանը—բույսի ծաղկումից անմիջապես հետո, իսկ 2-րդը՝ օգոստոսի երկրորդ կեսին: 3-րդ և 4-րդ տարիներում կատարվում է 4—5 խուզում, որոնցից առաջինը ծաղկելուց հետո, վերջինը՝ օգոստոսի 2-րդ կեսին: Խուզումը պետք է կատարել ալգեգործական հատուկ մկրատով, հեռացնելով ճյուղերի ընթացիկ աճի ծալիքը՝ 6—8 սմ երկարությամբ: Կտրված ճյուղերը և տերևները պետք է անպայման հեռացնել խուզովով բույսի պահից:

Չորս տարվա ընթացքում լուրաքանչյուր կտրված շիվից գոյանում են 2 կամ նույնիսկ 3 նոր շիվեր, իսկ երբ ճյուղավորման աստիճանը հասնում է իր մաքսիմումին, ճյուղավորման գոյան հավասարապես բաշխվում է պատկի մակերեսով, պակասում է նրանց ճյուղավորման ունակությունը՝ մեկ ճյուղից առաջանում է մեկ շիվ: Նկատվում է, որ սաղարթի ներքեմ հարկի ճյուղը լինում են շատ բարակ, իսկ դեպի գագաթը հաստանում են, նաև ճյուղով ուժեղանում է և ճյուղերի գծալին աճը: Սպնին չափաղանց խիտ ճյուղավորման շնորհիվ իր գեկորատիվաթլունը պահպանում է նաև տերևաթափից հետո: Պահկը ձեւվորած սղնին վնասատուներից չի տուժում, որովհետեւ լուրաքանչյուր խուզման ժամանակ տերևների հետ հեռացվում են նաև վնասատուների ձվիկները և թրթուրները: Այդ նույն պատճառով պակասում են նաև տերևների արևահարման և գագաթնալին ճյուղերի չորացման երեսը:

А. А. БОЗОЯН

## ОСОБЕННОСТИ СТРОЕНИЯ КРОНЫ КРУПНОКОЛЮЧЕГО БОЯРЫШНИКА ПРИ ДЕКОРАТИВНОЙ ФОРМОВКЕ

### Р е з ю м е

На основании опытов по формовке боярышника, проведенных в условиях Ереванского ботанического сада с 1954 по 1960 годы, рекомендуется вначале произвести предварительную формовку кроны с удалением примерно 60—70 % скелетных ветвей. В дальнейшем, в течение первых трех лет от каждого укороченного побега образуются 2—3 новых нежных побега, которые легко поддаются стрижке.

На третий и четвертый год после предварительной формовки ветвление боярышника крупноколючего достигает максимума, и крона делается достаточно густой, чтобы придать ей стрижкой желательную форму: шаровидную или пирамидальную, на штамбе и без штамба.

В первый после предварительной формовки год производятся две стрижки, на второй и третий годы дается 4—5 стрижек. Первая стрижка производится сейчас же после цветения, последняя—во второй половине августа. При стрижке срезается 6—8 см длины годичного побега.

В статье приводятся все цифровые данные.